

Լարաթրուր



Մեր հանրապետությունում լայն տարածված վնասատու է, որը վնասում է կարտոֆիլի պալարները: Տարբեր ուղղություններով անցքեր է բացում պալարների մեջ, որոնք պատճառ են դառնում նեխելուն և փշանալուն: Լարաթրուրները դրանք չրխկան բզեզի թրթուրներն են: Երբ բզեզը ընկնում է մեջքի վրա, արագ վեր է ցատկում և չրխկոցի ման ծայն հանելով ուղղվում, այդ պատճառով նրանց անվանում են չրխկան բզեզներ: Վարակված պալարները երկար չեն ապրում: Այդ պիսի պալարներից

անդուրեկան հոտ է գալիս և ուտելու համար պիտանի չեն: Թրթուրները բարակ են մինչև 35 մմ երկարությամբ, ունեն բաց կամ մուգ դեղին գույն, լարի նման կոշտ են, որից և ստացել են լարաթրուր անվանումը: Չմեռում են բոլոր հասակի թրթուրները, իսկ որոշ տեսակներից նաև բզեզները: Թրթուրներն ապրում են հողում, սնվում են բույսերի ստորգետնյա մասերով: Նրանց զարգացումը տևում է 3 – 5 տարի: Բացի կարտոֆիլից, լարաթրուրները վնասում են նաև բազմաթիվ կուլտուրական բույսերի սերմերին, ծիլերին, արմատավզին, պալարներին: Լարաթրուրներով համեմատաբար թույլ են վնասվում ընդդեմները և վուշը: Ուժեղ վնասվում են կարտոֆիլը, արևածաղիկը, ճակնդեղը, ծխախոտը, գարին և եգիպտացորենը:

Պայքարի միջոցառումներ

- ցանքերը կատարել խոր վարած, լավ մշակված և պարարտացված հողերում
- հնարավորության դեպքում խուսափել մի քանի տարի նույն հողամասում հացաբույսեր կամ կարտոֆիլ մշակելուց
- կիրառել պարարտացման բոլոր այն միջոցառումները, որոնք նպաստում են բույսերի արագ աճին
- բերքահավաքից հետո կատարել խոր վար
- տնկման ժամանակ օգտագործել բազուդին՝ 15-20 կգ/հա, պալարները նախացանքային մշակման ենթարկել պրետիծով՝ 1 տ պալարի համար 1լ

Կոլորադյան բզեզ

Չվաճև, փայլուն, դեղնա - մարնջագույն շերտերով բզեզ է, թևապանակների վրա կան 10 սև երկայնակի գոլեր: Բացի կարտոֆիլից վնասում է նաև մորմազգիների ընտանիքին պատկանող բոլոր բույսերին: Կարտոֆիլին վնասում են ինչպես բզեզները, այսպես էլ թրթուրները: Բզեզի թրթուրը շատակեր է, լրիվ ոչնչացնում է բույսի տերևները, ընդհուպ մինչև երիտասարդ ցողունները: Բզեզները ծնունդ են հողում: Չմեռելուց հետո դուրս են գալիս և անմիջապես սկսում սնվել: Բզեզները ծնունդից սկսում են դուրս գալ, երբ հողում ջերմությունը հասնում է 14-15°C-ի: Ցածրադիր, տաք գոտում դա տեղի է ունենում ապրիլի երրորդ տասնօրյակին, նախալեռնային գոտում՝ մայիսի վերջին, իսկ լեռնային գոտում՝ հունիսի երկրորդ տասնօրյակին: Լրացուցիչ երկար ժամանակ սնվելուց հետո բեղմնավորվում են և ապա ծվաղդում: Բզեզի էգը տերևների հակառակ երեսին դնում է 400 – 700, երբեմն 2000 – ից ավելի վառ մարնջագույն ծու:




Պայքարի միջոցառումներ

Վեգետացիայի ընթացքում կարտոֆիլի բույսերը հարկավոր է սրսկել հետևյալ պատրաստուկներից որևիցե մեկով. Բուլդոլ (25% խ.է.) 0.25 լ/հա, Դեցիս (25% խ.է.) 0.15 լ/հա, Մատչ (5% խ.է.) 0.3 լ/հա, Ռովիկուրտ (25% խ.է.) 0.2 լ/հա, Ֆոսպեցիդ (50% խ.է.) 0.15 լ/հա, Սումիցիդին (20% խ.է.) 0.3 լ/հա, Ջոլոն (35% խ.է.) 2 լ/հա, Արիվոլ (25% խ.է.) 0.15 լ/հա, Սումի-ալֆա (5% խ.է.) 0.2 լ/հա նորմաներով



Կարտոֆիլի ցեց

ՀՀ – ուն հայտնաբերվել է 2010 թ – ից հետո Արարատյան դաշտավայրի մի քանի համայնքներում: 12 – 16 մմ բևեռի բացվածքով քիթեր է: Նոր դուրս եկած թրթուրն անգույն է, բաց վարդագույն կամ դեղնակալանաչավուն, մուգ շագանակագույն գլխով: Հասուն թրթուրը դեղնավարդագույն կամ դեղնակալանաչավուն է, 10 – 13 մմ երկարությամբ: Դաշտային պայմաններում ծնունդ է հասուն թրթուրը կամ հարսնյակը հողի մակերեսային շերտում՝ բուսական մնացորդների տակ: Թիթեռների թռիչքը սկսվում է վաղ գարնանն ու շարունակվում մինչև հոկտեմբերի վերջը: Դրանք ակտիվանում են մայրամուտից հետո և լուսաբացին: Ցերեկը կարելի է հանդիպել տերևների հակառակ երեսին, ընծյուղների, պտուղների, բաց պալարների աչքերի շուրջ, պահեստում եղած տարաների վրա և այլն: Մեկ էգը դնում է 150 – 200 ծու: Նոր դուրս եկած թրթուրները սնվելով բույսի պարենիմային հյուսվածքներով տերևներում և ընծյուղներում առաջացնում են ականներ: Թրթուրները պալարի մեջ են թափանցում հիմնականում պալարի աչքերից: Ջերմաստիճանից կախված թրթուրների զարգացումը տևում է 11 – 14 օր: Ավարտելով սնումն ու զարգացումը թրթուրները լքում են պալարները, տերևները, ցողունները և տարբեր թաքստոցներում հարսնյակ վորվում: Կախված բնակլիմայական պայմաններից՝ ցեցը բաց



դաշտում տալիս է 2 – 6 սերունդ, նույնքան էլ կարտոֆիլի պահպանման ժամանակ: Վնասատուի բոլոր փուլերի համար մահացու են համարվում – 4°C-ից ցածր և +36°C – ից բարձր ջերմաստիճանային պայմանները: Էգերը նախընտրում են ծվաղել կարտոֆիլի վրա, ավելի քիչ ծվաղում են սմբուկի և վայրի մորմազգիների վրա: Թրթուրները նախընտրում են սնվել կարտոֆիլի պալարներով և տերևներով, հազվադեպ՝ այլ բույսերի տերևներով և լուլիկի պտուղներով: Ցեցը մեծ վնաս է հասցնում կարտոֆիլին ինչպես դաշտում, այնպես էլ պահպանման ընթացքում: Պահեստներում թրթուրների կողմից վնասված պալարները փտում են, ինչի հետևանքով վնասը կարող է հասնել 25 – 80%: Վնասված պալարները կորցնում են ապարնային տեսքն ու որակը, վատ են պահպանվում և որպես տնկանյութ չի կարելի օգտագործել:

Պայքարի միջոցառումներ

- կիրառել ցանքաշրջանառություն, բացառել մորմազգի մշակաբույսերի մշակությունը նույն հողատարածքում
- բերքահավաքից հետո ուշ աշնանը կատարել խոր վար
- կարտոֆիլի տունկը կատարել միայն առողջ տնկանյութով, 15 սմ – ից ոչ պակաս խորությամբ
- վաղահաս կարտոֆիլը գրեթե չի վնասվում ցեցի կողմից
- հրաժարվել անառնացան կարտոֆիլի մշակությունից
- ջրումները անծրևացման միջոցով կատարելիս նոր դուրս եկած թրթուրները մասնակի ոչնչանում են
- կատարել կանոնավոր բուկից, որպեսզի պալարները գտնվեն 5 սմ – ից ոչ պակաս խորության վրա
- բերքահավաքը կատարել սեղմ ժամկետում
- բերքահավաքից 5 – 7 օր առաջ փրերը հնձել, ոչնչացնել կամ հորել մինչև 50 սմ խորությամբ
- հավաքել և ոչնչացնել դաշտերը շրջապատող մորմազգի մոլախոտերը
- համված կարտոֆիլը չի կարելի գիշերը թողնել դաշտում, որպեսզի քիթեռները ծու չդնեն պալարների վրա
- վնասատուի հայտնաբերման դեպքում հերթափոխային եղանակով անհրաժեշտ է օգտագործել հետևյալ պատրաստուկներից որևե մեկը՝ Վերտիմեկ խէ 0.5 լ/հա, Սումի - ալֆա խէ 0.2 լ/հա, Արիվոլ խէ 0.16 լ/հա, Դեցիս 2.5%
- կոլորադյան բզեզի դեմ օգտագործվող պատրաստուկները արդյունավետ են նաև կարտոֆիլի ցեցի դեմ

Կարտոֆիլի ցողունային նեմատոդ

Նեմատոդի մարմինը որդանման է, որը ծայրում սրանում է, երկարությունը 0.7 – 1.8 մմ է: Վարակի աղբյուր են հանդիսանում սերմացու պալարը և հողը, որտեղ նեմատոդը կարող է մնալ մի քանի տարի: Նրանով վարակված սերմացու պալարից որդերը անցնում են կարտոֆիլի ծիլերի և ցողունի մեջ, ապա ստորոններ, հետագայում դեպի նոր կազմակերպված պալարներ: Նեմատոդի մեկ էգը կարող է դնել մինչև 250 ծու: Չվի զարգացումը տևում է 2 – 3 շաբաթ, որից հետո դուրս են գալիս թրթուրները: Նեմատոդները բազմանում են թե դաշտային պայմաններում և թե պալարները պահելու տեղում:



Նեմատոդով վարակված բույսի աճն ու զարգացումը խիստ դանդաղում է, վեգետացիայի վաղ շրջաններում դեղնում են, իսկ երբեմն էլ չորանում: Այս նշանները սկզբում նկատվում են բույսի ստորին, իսկ հետագայում նաև վերին յարուսի տերևների վրա: Ուժեղ վարակված բույսերի արմատավզիկի և ցողունի ներքին մասի վրա կարելի է նկատել նեմատոդի առաջացրած վնասվածքը, որը մուգ գորշ գույնի է: Վարակված պալարի վրա նկատվում են գորշ բծեր, որոնց մեջտեղում հազիվ նկատվում է թրթուրի ներթափանցման անցքը: Գորշացած մասերի տակ պալարի օսլան դառնում է մուգ գորշ գույնի: Հետագայում վարակված պալարների մաշկը գորշանում, ճաքծքում և խցանի տեսք է ստանում ու հեշտությամբ անջատվում է: Նեմատոդը կարտոֆիլին մեծ վնաս է պատճառում պահեստներում և բուրտերում պահելու ժամանակաշրջանում, հատկապես երբ ջերմությունն ու խոնավությունը բարձր են լինում:

Պայքարի միջոցառումներ

- տնկելու համար պետք է առանձնացնել միայն առողջ պալարներ
- կարտոֆիլի մշակության համար ընտրել չվարակված հողամասեր
- բերքահավաքը կատարել սեղմ ժամկետներում և ժամանակին
- բերքը մինչև պահպանության դեմքը չորացնել
- բերքահավաքից հետո դաշտից հավաքել բույսերի մնացորդները և հողում մնացած պալարները
- հնարավորության դեպքում բերքահավաքից հետո ցրտահերկ կատարել և ձմռանը ջրել

Կարտոֆիլին վնասող այլ վնասատուներ

Կարտոֆիլի պալարների հողում վնասում են նաև աշնանացանի և այլ կրծող բվիկներ, որոնք պալարները կրծելով խոր փոսեր են առաջացնում նրան վրա: Պալարները բվիկների թրթուրներից ուժեղ վնասվում են շոգ և չոր տարիներին:



Լեռնային շրջաններում, հատկապես անտառաշատ տեղերում, կարտոֆիլի պալարները կարող են վնասվել մայիսյան և հունիսյան բզեզների թրթուրներով:



Արարատյան դաշտավայրում մշակվող վաղահաս կարտոֆիլին որոշ տարիներին մեծ վնաս է պատճառում արջուկը:

